

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2019թ. մարտի 5-6-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) կայացած Եվրոպական հարևանության գործիք/Արևելք երկրներում բնապահպանական բաց տվյալների և էլեկտրոնային կառավարման (e-government) օգտագործման վերաբերյալ տարածաշրջանային հանդիպմանը,
- ✓ 2019թ. մարտի 5-8-ը ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Նյու Յորքում (ԱՄՆ) կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 50-րդ նստաշրջանին, ինչպես նաև նստաշրջանի ընթացքում կայանալիք Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրման հիմնական ուղղությունների և մակրոտնտեսության գծով Կոլեգիայի անդամ-նախարար Տ. Վալովայայի հետ հանդիպմանը,
- ✓ 2019թ. մարտի 13-15-ը ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, ՀՀ ՎԿ գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը, մարդահամարի վարչության պետ Վ. Գևորգյանը և նույն վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Մելիքսեթյանը մասնակցել են ք. Հելսինկիում (Ֆինլանդիա) կայացած «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում Վարչական տվյալների և մարդահամարների վերաբերյալ Եվրոպական լավագույն փորձի ուսումնասիրման և փոխանակման նպատակով հանդիպմանը,

- ✓ 2019թ. մարտի 21-22-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանի համար Կայուն զարգացման վերաբերյալ տարածաշրջանային ֆորումին,
- ✓ 2019թ. ապրիլի 4-5-ը ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Պահանջարկի սահմանափակում և վառելիքի փոխակերպում» խորագրով էներգետիկ քաղաքական ֆորումին և «Էներգետիկայի վիճակագրություն» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. ապրիլի 9-10-ը ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը և «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» ծրագրի վիճակագիր Ա. Պողոյանովան մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Բնապահպանական ծախսերի ինդեքսի և ֆիզիկական ծավալների ցուցանիշների ձևավորումը միջազգային պահանջներին համապատասխան» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. ապրիլի 9-12-ը ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի խորհրդակցությանը,
- ✓ 2019թ. ապրիլի 10-13-ը ՀՀ ՎԿ մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը և 2019թ. ապրիլի 15-17-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել են ք. Ստամբուլում (Թուրքիա) կայացած Բազմաչափ ցուցանիշների կլաստերային հետազոտությունների (MICS) իրականացմանը նվիրված աշխատաժողովին,

- ✓ 2019թ. ապրիլի 15-16-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) համար վիճակագրության գծով երրորդ փորձագիտական հանդիպմանը և 2019թ. ապրիլի 17-18-ը՝ ԿՁՆ-ի համար վիճակագրության վերաբերյալ աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. ապրիլի 15-19-ը ՀՀ ՎԿ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը և տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ս. Շախգելոյանը մասնակցել են ք. Դեջոնում (Կորեայի Հանրապետություն) կայացած Կայուն զարգացման համար մեծ տվյալների վերաբերյալ տարածաշրջանային ուսումնական դասընթացին,
- ✓ 2019թ. ապրիլի 22-24-ը ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած Վաշինգտոն խմբի տարածաշրջանային իրագործման և տեխնիկական աջակցության աշխատաժողովին:

Առաքելություններ

- ✓ 2019թ. մարտի 4-7-ը ՀՀ ՎԿ-ում էր Համաշխարհային բանկի հետազոտությունների լուծումների գծով փորձագետ Իրինա Սերոբյանը ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության (AGRIS) ծրագրի շրջանակում գյուղատնտեսության վիճակագրության հետազոտությունը համակարգչի կիրառմամբ անհատական հարցազրույց վարելու (CAPI) տարբերակով իրականացնելու վերաբերյալ ուսուցում անցկացնելու նպատակով,
- ✓ 2019թ. մարտի 18-29-ը ՀՀ ՎԿ-ում էր Արժույթի միջազգային հիմնադրամի Ազգային հաշիվների գծով փորձագետ Բենթ Թեյջը Նիդերլանդների կարողությունների զարգացման գործընկերության ծրագրի շրջանակում «Ազգային հաշիվների և գների վիճակագրության կատարելագործումը Արևելյան և Հարավ-արևելյան Եվրոպայում» ծրագրի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. մարտի 25-29-ը ՀՀ ՎԿ-ում էր Համաշխարհային բանկի փորձագետ Իգոր Չերնիշևը «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում քննարկումներ իրականացնելու նպատակով,
- ✓ 2019թ. մարտի 27-29-ը ՀՀ ՎԿ-ում էին ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության (AGRIS) ծրագրի թիմի խորհրդատու Մայքլ Սթայները և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության վիճակագրության բաժնի վիճակագիր Նելի Գեորգիևան ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության (AGRIS) ծրագրի շրջանակում քննարկումներ իրականացնելու նպատակով,

- ✓ 2019թ. ապրիլի 8-9-ը ՀՀ ՎԿ-ում էին «Expertise France» կազմակերպության Տնտեսական և ֆինանսական կառավարման վարչության Պաշտոնական վիճակագրության և զարգացման բաժնի պետ Բեատա Սուսլտերովան և 2019թ. ապրիլի 8-12-ը՝ Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից վարձված անկախ փորձագետներ Ժան Պոլ Բլանդինիերսը, Թիերրի Կոուլետը և Գերելտույա Ալթանքույազը «Վիճակագրությունը Արևելյան Գործընկերության միջոցով» տարածաշրջանային ծրագրի շրջանակում մեկնարկային առաքելություն իրականացնելու նպատակով,
- ✓ 2019թ. ապրիլի 10-12-ը ՀՀ ՎԿ-ում էին ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի փորձագետներ Շարիտա Սերրաոն և Ադել Մարշալը «Գենդերային քաղաքականության տվյալների ինտեգրումը Հայաստանում» խորագրով տեխնիկական աջակցության աշխատանքային հանդիպում իրականացնելու նպատակով,
- ✓ 2019թ. ապրիլի 15-19-ը ՀՀ ՎԿ-ում էր Ուկրաինայի վիճակագրության, հաշվապահության և աուդիտի ազգային ակադեմիայի նախագահ Օլեքսանդր Օսաուլենկոն «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի «Ինստիտուցիոնալ կառուցվածքը և պաշտոնական վիճակագրության վերաբերյալ օրենքը» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. ապրիլի 25-29-ը ՀՀ ՎԿ-ում էր Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ECASAT դրամաշնորհային ծրագրի Թվինինգ գործընկերության ծրագրի տնօրեն Մարգարիտա Ռոհրը և Համաշխարհային բանկի փորձագետ Իգոր Չերնիշևը «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի «Ռիսկերի կառավարման համակարգը» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Տեղային սեմինարներ

- ✓ 2019թ. մարտի 1-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի շրջանակներում «Պատրաստվածության աջակցություն» ծրագրի հերթական աշխատաժողովին,
- ✓ 2019թ. մարտի 11-15-ը ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել են ք. Երևանում առցանց քննարկման միջոցով կայացած ԵԱՏՀ Արտաքին և փոխադարձ առևտրի գծով ենթակոմիտեի 14-րդ նիստ,
- ✓ 2019թ. մարտի 12-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Տնտեսական համագործակցության և այլ ոլորտների հարցերով» ՀՀ-ԵՄ ենթակոմիտեի առաջին նիստին,
- ✓ 2019թ. մարտի 12-ին ՀՀ ՎԿ շինարարության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Լ. Պարոնյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ոլորտների նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի շրջանակում՝ Բազմաբնակարան և հասարակական շենքերի անձնագրերի ձևերի և Բազմաբնակարան շենքի պահպանման և շահագործման կանոնների մշակման արդյունքների ներկայացման վերաբերյալ աշխատաժողով-քննարկմանը,
- ✓ 2019թ. մարտի 14-ին ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ազգային փոքրամասնությունների Եվրոպայի Խորհուրդի կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ Հայաստանի 5-րդ ազգային զեկույցի պատրաստման ուղղությամբ աշխատանքային խմբի հանդիպմանը,

- ✓ 2019թ. մարտի 15-ին ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Ջ. Ավոյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Համաշխարհային բանկի կողմից կատարված Աշխատաշուկայի ախտորոշման և Միգրացիայի ուսումնասիրությունների նախնական արդյունքների հաշվետվությունների ներկայացմանը,
- ✓ 2019թ. մարտի 15-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը, ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի առաջին կարգի մասնագետ Տ. Մկրտչյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Առաջատար սոֆտ-լուծումները մեկ հարթակում» խորագրով կոնֆերանսին,
- ✓ 2019թ. մարտի 18-ին ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Ջեյնալյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Հ. Սիմոնյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ԵՄ-Հայաստան քաղաքականության երկխոսություն կրթության ոլորտում և Թուրինի գործընթաց 2018-2020 Հայաստանում. Ձևավորենք նոր հմտություններ գալիք օրվա համար» խորագրով միջոցառմանը,
- ✓ 2019թ. մարտի 18-19-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Աղետների կառավարման երկրի թիմի (DMCT) հանդիպմանը,
- ✓ 2019թ. մարտի 19-ին ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Հրազդանում կայացած Հրազդանի գետավազանի հիմնախնդիրների վերաբերյալ շահառուների հետ հանրային խորհրդակցությանը,

- ✓ 2019թ. մարտի 21-ին ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Գավառում կայացած Սևանի Ջրավազանների կառավարման տարածքի (ՋԿՏ) վերաբերյալ շահառուների հետ հանրային խորհրդակցությանը,
- ✓ 2019թ. մարտի 21-ին ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների հասանելիության և մասնակցության բարելավում՝ ըստ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և ՖՄԴ հայեցակարգի» ծրագրի շրջանակում «Կայուն զարգացման նպատակներ. Հաշմանդամության վերաբերյալ տվյալների հավաքագրում» խորագրով հանդիպում-քննարկմանը,
- ✓ 2019թ. մարտի 22-ին ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ազգային փոքրամասնությունների ԵԽ շրջանակային կոնվենցիայի 5-րդ զեկույցը նախապատրաստող միջգերատեսչական աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2019թ. մարտի 25-ից մայիսի 3-ը ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետներ Կ. Շահբազյանը, Հ. Ջանլաթյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Է. Գևորգյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2019թ. մարտի 28-ին ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ պայքարի ԵԽ կոնվենցիայի ուժի մեջ մտնելու 10-ամյակը և Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաներին պաշտպանելու մասին և Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ պայքարի մասին ԵԽ կոնվենցիաների վավերացման գործընթացը Հայաստանում» խորագրով փորձագիտական խորհրդաժողովին,

- ✓ 2019թ. մարտի 28-ին ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՀ «2008 ազգային հաշիվների համակարգ»-ի միջազգային ստանդարտի ներդրման Աշխատանքային խմբի և վիճակագրական դասակարգումների գծով Աշխատանքային խմբի հինգերորդ համատեղ նիստին,
- ✓ 2019թ. մարտի 28-29-ը ՀՀ ՎԿ 30 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Երկրորդ սերնդի իրավական կարգավորումը որակի երաշխիք. 2018թ. Պաշտոնական վիճակագրության մասին ՀՀ օրենքի դրույթները» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. մարտի 29-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի թվային փոխարկման օրակարգ. Թվային ռազմավարություն և տվյալների վրա հիմնված զարգացում Հայաստանում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. ապրիլի 2-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի անդամի մասնակցությամբ «Կանաչ կլիմայի ազգային խորհրդատվություն» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. ապրիլի 3-ին ՀՀ ՎԿ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ճապոնական հրաշք. քաղված դասեր և մարդահրավերներ» թեմայով Հիտոցուբաշի համալսարանի պրոֆեսոր Քրիստինա Ահմաջյանի կողմից անցկացրած բաց դասախոսությանը,

- ✓ 2019թ. ապրիլի 4-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Վ. Դավթյանը, ՀՀ ՎԿ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը և մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՀ Վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի 14-րդ նիստին,
- ✓ 2019թ. ապրիլի 4-5-ը ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը և «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» ծրագրի վիճակագիր Ե. Գևորգյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Երեխաների այլընտրանքային խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումները մշտադիտարկելու, ուսումնասիրելու և վերհանված խնդիրներին արձագանքելու կառավարության կարողությունների հզորացում ծրագրի շրջանակում Այլընտրանքային խնամքի և պաշտպանության համակարգի մշտադիտարկման համար տվյալների հավաքագրման վերաբերյալ աշխատաժողովին,
- ✓ 2019թ. ապրիլի 5-ին ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «ԵԱՏՀ «Ծախսեր-թողարկում» միջպետական աղյուսակի կառուցման մեթոդաբանության մշակման, դրա հիման վրա Միության ինտեգրացիոն ներուժի փորձարարական հաշվարկ և գնահատում» խորագրով գիտահետազոտական աշխատանքների II փուլին,

- ✓ 2019թ. ապրիլի 10-12-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Հ. Սիմոնյանը և «Վիճակագրական տվյալների հավաքում» ծրագրի աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնալյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Գենդերային քաղաքականության տվյալների ինտեգրումը Հայաստանում» խորագրով կարողությունների զարգացման դասընթացին,
- ✓ 2019թ. ապրիլի 11-ին ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ձեռնարկատիրական հերոսներն այսօր» խորագրով Երևանում գործարար կանանց ակումբի 5-րդ հանդիպմանը,
- ✓ 2019թ. ապրիլի 17-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը և ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՍԻԳՄԱ-ի պետական կառավարման սկզբունքների ելակետային գնահատման զեկույցի վերաբերյալ սեմինարին,
- ✓ 2019թ. ապրիլի 22-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած «ՔՀԿ համագործակցության արդյունավետ զարգացման համար» բաց հարթակի շրջանակում Կայուն զարգացման նպատակների իրագործման մեջ ՔՀԿ մասնակցության վերաբերյալ հանրային քննարկմանը,
- ✓ 2019թ. ապրիլի 29-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ԵՄ շրջակա միջավայրի համար» ծրագրի ազգային մեկնարկին նվիրված աշխատաժողովին,

- ✓ 2019թ. ապրիլի 30-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի մեկնարկային աշխատաժողովին:



2019թ. մարտի 21-22-ը ՀՀ ՎՊԻՍ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանի համար Կայուն զարգացման վերաբերյալ տարածաշրջանային ֆորումին:



2019թ. ապրիլի 8-9-ը ՀՀ ՎԿ-ում էին «Expertise France» կազմակերպության Տնտեսական և ֆինանսական կառավարման վարչության Պաշտոնական վիճակագրության և զարգացման բաժնի պետ Բեատա Սուսզտերովան և 2019թ. ապրիլի 8-12-ը՝ Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից վարձված անկախ փորձագետներ ժան Պոլ Բլանդինիերսը, Թիերրի Կոուլետը և Գերելտույա Ալթանքույազը «Վիճակագրությունը Արևելյան Գործընկերության միջոցով» տարածաշրջանային ծրագրի շրջանակում մեկնարկային առաքելություն իրականացնելու նպատակով:



Ձախից՝ ՀՀ ՎԿ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյան, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից վարձված անկախ փորձագետներ՝ Գերելտույա Ալթանքույազը, ժան Պոլ Բլանդինիերսը, Թիերրի Կոուլետը: